

քիս:» Յակոբ երէց իր այս նուիրած ձեռագլխնորուն կցած է յիշատակարան մը որ կրնայ ըսուիլ Հանսոս կենսագրութիւն Գրիգոր պօրֆի կեսարացոյ եւ իւր տիւնիւն. Յակոբ երէց 1635է ըսկսեալ Ս. Երուսաղէմի տնօրինական տեղեաց վրայ գրած է զանազան տաղեր. Գովես սու Ս. Քաղսն Երուսաղէմ. Յակոբ երիցու է սասցեալ. Այս են ասկնայն Տեօրիւնակսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի սուրբ եւ յասուածարեակ մայրսպաղսն յԵրուսաղէմ ի մեջ սորա եւ յսրսպոյ վերնագրով. բաց աստի գսննասխան եւ ողբերգակսն տաղեր ունի Մովսէս կթղի եւ Կեսարացի Գրիգոր վրդի մահուան առթիւ. (Հա. 1909, էջ 371-73. նաև Տալ. Ցուց. Թ. 387):

ՅԱԿՈՅ ԵՒ ԴՈԿԻՍՅԻ.— Կիպրոսի մէջ վախճանած. Գահիրէի մէջ ունեցած իր սեփական տունը կտակած է Ս. Յակոբի վանքին:

ՅԱԿՈՅ ԻԶԷՐԻ ԴԱԶԱՆԵԱՆ, ՊՈՒՍԵՑԻ.— Պոլսի մէջ ունեցած իր սեփական տունը, 1894ին կը կտակէ Ս. Յակոբի վանքին, որուն վաճառման արգիւնքովը, երկու մթերանոցներ կը յատկացուին Յոպպէի մէջ ի յիշատակ կտակարարին. (Արձնգր. Տն. Ժող. 1894, Նիստ ԾՍ. էջ 51):

ՅԱԿՈՅ ԿԹՂ. ԶՈՒՂԱՅԵՑԻ.— (1655-1680). Ծ. 1598ին հին Զուղայի մէջ, Կթղ. Տեղապահ 1651ին, իր պաշտօնավարութեան մասին տեսնել (Դաւրիժեցի, էջ 405): Եղիազար Այնթապցիի հակաթող կաթողիկոսութեան շփոթներուն ժամանակ, Երուսաղէմի Աստուածատուր պարքին հրաւէրով 1665ին Յակոբ կթղ. կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ նոյն տարին մեկնելով անկէ կը հասնի Պոլիս, ուր կաթողիկոսական պաշտօնի մասին յարուցուած ոտնձգութիւններուն դէմ կը պայքարի եւ ապա կը վերադառնայ 1667ին Ս. Էջմիածին: Յակոբ կթղ. Փիլիպպոս կթղի սկսած եւ մահուամբը կիսատ մնացած զանգակատունը կը վերջացնէ վայելչաձեւ ծածքով մը. որուն արձանագրութիւնը կը գտնուի նոյն զանգակատան գմբեթի մէջ սա տողերով.

«Ի թագաւորութեան Պարսից Շահապաս Բ.ի. նաև ի հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի թուին Հայոց ՌՃԳ. հիմնարկեցաւ. Տեառն Յակոբայ Զուղայեցոյ ՌՃԶ. աւարտեցաւ զանգակատունս ծախիւք Անտոն Զէլէպիլին ի փառս Քրիստոսի Աս-